Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
02.05.2023թ. թիվ ___նիստում
Տնօրեն՝ Ք.Ահարոնյան

Հաստատվել է հաստատության
Կոլեգիալ կառավարման խորհրդի
27.06.2023 թ. թիվ ___նիստում
Նախագահ՝ Ա. Եսայան

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»
ՊՈԱԿ-ի որակի ապահովման

ԳՅՈՒՄՐԻ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի (Այսուհետ՝ Ուսումնարան) 2021–2026թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը սահմանել է այն հիմնական ուղղությունները, որոնց հետևելու է Ուսումնարանը երկարաժամկետ հեռանկարում՝ իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակներն իրականացնելու համար տրամադրելով որակյալ կրթություն:

Ուսումնարանի առաքելությունն է.

Ուսումնատեխնիկական միջոցներով զինված բարենպաստ միջավայրում և գործատուների հետ սերտ համագործակցությամբ իրականացնել երկրի տնտեսության պահանջներին համապատասխան, կարողությունների զարգացմանը միտված նախնական մասնագիտական հիմնական և լրացուցիչ բարձրորակ կրթական ծառայություններ: Պատրաստել երկրի զարգացման ուղղություններին համապատասխան հիմնարար ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով որակյալ և մրցունակ մասնագետներ: Նպաստել անհատի շարունակական զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու և դերի բարձրացման և համակողմանի ձևավորմանը, ուսումնական հաստատության և մասնավոր հատվածի միջև վստահելի գործընկերության զարգացմանը, նաև ներառականության և հավասարության ամրապնդմանը:

Ուսումնական հաստատությունը նպատակ ունի.

1. Բարձրացնել ուսման որակը
2. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերանայում՝ արդի կրթության չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան
3. Բարելավել որակի ներքին ապահովման համակարգը կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան
4. Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր
5. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը ուսումնական գործընթացներում
6. Աջակցել հասարակության կրթական, տնտեսական, մշակութային առաջընթացին՝ նպաստելով Ուսումնարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը: Ապահովել հասարակության հետ

կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում Ուսումնարանի առավելագույնս ներգրավումը

7. Համալրել Ուսումնարանի նյութատեխնիկական բազան և բարելավել կրթական գործընթացին նպաստող արտադրական միջավայրը, արդիականացնել լսարանային, լաբորատոր և տեխնիկական գույքային միջոցները
8. Ստեղծել Ուսումնարանի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը Ուսումնարանի ուսանողների և աշխատակիցների համար
9. Առաջարկել կրթությանը օժանդակող լրացուցիչ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների և այլ շահառուների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների աջակցմանը, ինչպես նաև կրթական ծառայությունների կատարելագործմանը
10. Կատարելագործել լրացուցիչ կրթական ծրագրերի /ԼԿԾ/ իրականացումը: Զարգացնել հարատև ուսումնառության համակարգը Ուսումնարանում
11. Իրականացնել ուսանողների ընդունելության, նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ ու պետական ամփոփիչ ատեստավորման նպատակային կազմակերպում
12. Բարելավել ֆինանսական միջոցները, ապահովել ֆինանսական կայունություն, ֆինանսական պլանավորումը դարձնել ներդաշնակ Ուսումնարանի ռազմավարական նպատակներին:
13. Բարձրացնել Ուսումնարանի կառավարման արդյունավետությունը
14. Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը Ուսումնարանի կառավարմանը, հզորացնել Ուսումնարանում գործող ուսանողական խորհուրդը և ուսանողական ընկերությունները
15. Ընդլայնել համագործակցությունը և սոցիալական գործընկերությունը

1. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

- **Գնահատում** - Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի համակարգված վերլուծության գործընթաց, որը հանգում է Ուսումնարանի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների:
- **Ինքնագնահատում** – փաստական տվյալների համակարգված հավաքման, ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսների և ուսանողների հետ քննարկումների գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնագնահատման զեկույցում:
- **Փորձագիտական գնահատում** – Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:
- **Ծրագրի հաստատում** - գործընթաց, որով Ուսումնարանը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և ծրագրային թիմի կարողությունը՝ իրականացնելու այն սահմանված ստանդարտներին համապատասխան:
- **Ծրագրի մշտադիտարկում (մոնիթորինգ)** - գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները՝ բարելավող անհրաժեշտ միջոցառումների իրականացման լավագույն փորձի տարածման համար:
- **Ծրագրի պարբերական վերանայում** - գործընթաց, որով Ուսումնարանը գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը՝ նրա իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով և որոշում ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- **Չափանիշներ** – մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և/կամ չախորոշչի իրագործման աստիճանը:
- **Որակավորման նկարագրիչներ** – ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարբերությունները:
- **Կրթական չափորոշիչներ** – պահանջներ գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ու չափի վերաբերյալ, որոնք տվյալ ծրագրի շրջանակներում պահանջվում են ուսանողից՝ հայցվող որակավորման

շնորհման համար:

- **Որակ** – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ Ուսումնարանի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ «որակը որպես գերազանցություն», «որակը որպես համապատասխանություն նպատակին», «որակը որպես բարելավում» և այլն:
- **ՈԱ** - Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:
- **Որակի աուդիտ** – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինը ստուգում է Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստական իրականացումը:
- **Որակի ներքին ապահովման համակարգ** – կառավարման համակարգ, որով Ուսումնարանը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է իր որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները:
- **Որակի բարելավում** – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց:
- **Որակի փորձաքննություն** – Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց:
- **Որակի կառավարում** - որակի բարելավման նպատակով Ուսումնարանի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն:
- **Որակի վերահսկում** – Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց:
- **Որակի քաղաքականություն** – որակի ապահովման ասպարեզում Ուսումնարանի ընդհանուր մտադրություններն ու սկզբունքները պաշտոնապես արտահայտող ձևակերպում:
- **Որակի մշակույթ** - որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է Ուսումնարանի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:
- **Հավատարմագրում** - գործընթաց, որով պետական (կամ հասարակական) լիազոր մարմինը գնահատում է Ուսումնարանի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչ ներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար: Այն բաղկացած է երեք իրարահաջորդ փուլերից՝ ինքնագնահատում և

համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:

- ԼԿԾ- լրացուցիչ կրթական ծրագիր

2. ՈՐԱԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Որակը որպես «Նպատակին համապատասխանության» սկզբունքն ընդգծում է համընդունելի չափանիշներին բավարարելու կամ համապատասխանելու անհրաժեշտությունը: Այստեղ ուշադրության կենտրոնում Ուսումնարանի կամ կրթական ծրագրի մակարդակում գործընթացների արդյունավետությունն է, որոնք ուղղված են սահմանված կամ տրված նպատակների կատարմանը: Ուսումնարանի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները որակի ապահովման «նպատակին համապատասխանության» մոդելի հիմնական ուղղորդիչներն են, քանի որ սահմանում են արդյունքների պլանավորման, մշտադիտարկման (մոնիթորինգի) և չափման շրջանակը: Դրանք նաև նպաստում են շահեկիցների հետ կապին, ինչպիսիք են գործատուները, տնտեսությունը, կառավարությունը, ուսանողները և ծնողները:

Ուսումնարանի որակի ապահովման հիմքում ընկած են որակի չափանիշներ ինչպես «Նպատակին համապատասխանությունը» (այսինքն՝ սահմանված նպատակին հասնելու երաշխիքը), այնպես էլ «նպատակի համարժեքությունը» (այսինքն՝ ընտրված նպատակի պատշաճությունը, տեղին լինելը, շահեկիցների ակնկալիքների և պահանջների հաշվի առնելը): Վերջինս կարող է ապահովվել միջազգային կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի հետ սերտ կապի պայմաններում:

3. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ստորև ներկայացված են Ուսումնարանի որակի ապահովման քաղաքականության հիմքում դրված հիմնարար սկզբունքները

Սկզբունք 1.

Համակարգային մոտեցում. Ուսումնարանի գործունեության բոլոր ոլորտները՝ ուսումնական, մասնագիտական ուսուցումը, պրակտիկաները ենթակա են գնահատման և հաշվետվողականության:

Սկզբունք 2.

Կենտրոնացված կանոնակարգում. Ուսումնարանի որակի ապահովման գործընթացների համար գործում են միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնց հետևում են ուսումնական ողջ

անձնակազմը և ուսանողները: Այստեղ հիմնական համակարգող դերը վերապահված է վարչական կազմին(տնօրեն, տնօրենի տեղակալներ), որն իրականացնում է համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, որակի ապահովման նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը:

Սկզբունք 3.

Ուսումնարանն իր գործունեության ընթացքում կրթական պրոցեսն իրականացնելիս առաջնորդվում է պետական չափորոշիչներով

Սկզբունք 4.

Ինքնագնահատում. Ուսումնարանի գործունեությունը գնահատվում է ըստ իր նպատակների, թե որքանով են իրականացվել սահմանված նպատակներդ որակի ապահովման ընդունված մոդելը ենթադրում է պլանավորման և գնահատման համակարգի առկայություն: Նպատակները պետք է պլանավորվեն, իսկ գործողությունները՝ լինեն չափելի: Սահմանված նպատակները պետք է լինեն կոնկրետ, չափելի,իրագործելի, իրատեսական և ժամանակագրված (SMART):

Սկզբունք 5.

Բարելավում. Ուսումնարանի որակի ապահովման համակարգը միտված է Ուսումնարանում որակի շարունակական բարելավման գործընթացներին նպաստելուն: Ինքնագնահատումը դիտարկվում է որպես կարևոր գործիք՝Ուսումնարանում կրթության որակը բարձրացնելու համար: Ուսանողների, շրջանավարտների և գործատուների հարցումները դիտվում են որպես որակի շարունակական բարելավման կարևոր գործիք:

Սկզբունք 6.

Հենանշումների և վկայությունների վրա հիմնված մոտեցում. Ուսումնարանը գնահատում է իր ձեռքբերումները համապատասխան ազգային և միջազգային հենանիշների նկատմամբ: Ուսումնարանի որակի ապահովման մեթոդները հիմնված են ապացույցների/վկայությունների վրա, որտեղ վերջնարդյունքներն ու շահեկիցների (այդ թվում՝ ուսանողների, դասախոսների, գործատուների և լայն հանրության) հետադարձ կապով ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում վերլուծությունների և եզրակացությունների համար և դրանց հիման վրա պլանավորվում են բարելավող միջոցառումները:

Սկզբունք 7.

Անձնակազմի ընդլայնված մասնակցություն. Ուսումնարանը խրախուսում է դասախոսական և վարչական կազմերի ընդլայնված մասնակցությունը որակի ապահովման և բարելավման գործընթացներում, խթանում անհատական նախաձեռնությունները որակի ապահովման գործընթացներում:

Սկզբունք 8.

Ուսանողների և արտաքին գնահատողների ներգրավում. Ուսանողների, շրջանավարտների և գործատուների լիարժեք մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, ինչպես նաև Եվրոպական չափորոշիչների պահանջը: Նախատեսված է տարբեր ոլորտներում նրանց մասնակցության հետևյալ ձևերը՝

- դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողներ և շրջանավարտների հարցումներ,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներ
- դասավանդման արդյունավետության վերաբերյալ ծնողների հարցումներ
- Վարչական կազմի կողմից դասախոսների գնահատում
- դասախոսների ինքնագնահատում:

Սկզբունք 9.

Փոխկապվածություն որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացների միջև: Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Ըստ այդմ, Ուսումնարանի ներքին և արտաքին գործընթացների հիմնական փոխկապակցող օղակներն են:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնարանի որակի ապահովման հիմնական նպատակներն են՝

- երաշխավորել բարձր չափանիշների պահպանումը Ուսումնարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում,
- ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հիմք՝ Ուսումնարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ստեղծել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը Ուսումնարանում,
- հնարավորություն տալ Ուսումնարանին հավաստելու ինքնիրեն, իր շահեկիցներին և արտաքին գնահատողներին, որ որակի ապահովման բարձրացման որդեգրած քաղաքականությունը, համակարգը և գործընթացներն արդյունավետ են գործում,

- ապահովել կրթության որակի համար Ուսումնարանի հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադրի (Կառավարության) և ֆինանսավորող այլ կազմակերպությունների առջև,

Սահմանված նպատակներից բխում են Ուսումնարանի որակի ապահովման գործընթացի հետևյալ խնդիրները՝

- համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանմանը, կրթական ծրագրերի որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը,
- ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար,
- որակի ապահովման համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
- ապահովել որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար,
- ապահովել, որ ուսումնական կրթական ծրագրերի որակը բավարարի բոլոր շահեկիցների ակնկալիքները, իսկ Ուսումնարանի շրջանավարտները ձեռք բերեն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներ և հմտություններ

5. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Որակի ապահովման քաղաքականությունը սահմանում է Ուսումնարանի սկզբունքային մոտեցումները որակի ապահովման հիմնահարցերի և դրանց իրագործման ուղիների վերաբերյալ: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգաբերում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները:
2. Որակի ապահովման քաղաքականության միջոցով Ուսումնարանը ստեղծում է որակի ապահովման մի այնպիսի համակարգ, որը հստակ սահմանում է որակի ապահովման ինստիտուցիոնալ գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները, որակի ապահովման համակարգի կառուցվածքը և ընթացակարգերը:

3. Ուսումնարանի որակի ապահովման քաղաքականության նպատակն է ներդնել որակի ապահովման պաշտոնական, թափանցիկ և վստահելի համակարգ հիմնված գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին և արտաքին գնահատման վրա:
4. Ուսումնարանի որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են.
   - ուղենիշներ տրամադրել որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի մշակման և իրականացման համար,
   - ուղենիշներ տրամադրել որակի ներքին չափորոշիչների և չափանիշների սահմանման համար համահունչ ընդունված եվրոպական պահանջներին,
   - նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի հաստատմանը և հետագա զարգացմանը Ուսումնարանում,
   - օգնել բացահայտելու Ուսումնարանի ուժեղ և հատուկ ուշադրության արժանի ոլորտները կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով շարունակական բարելավում ապահովելու համար,
   - ներդաշնակեցնել որակի ապահովման տարբեր ոլորտները և գործընթացները Ուսումնարանում,
   - ամրապնդել որակի ապահովման կենտրոնի դերակատարությունը որակի կառավարման և բարձրացման հարցերում,
   - նպաստել Ուսումնարանի առաքելության իրականացմանը՝ նրա ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան,
   - պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել որակի ապահովման համակարգը, կատարելագործել և արդիականացնել որակի ապահովման գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,
   - երաշխավորել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը Ուսումնարանի առաքելությանը, ռազմավարական նպատակներին և խնդիրներին:

ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության նպատակը	Որակի քաղաքականության նպատակն է սահմանել Ուսումնարանի որակի ապահովման գործընթացներն ուղղորդող հիմնարար կանոնների ամբողջություն:
Որակի ապահովման հիմնական ոլորտները	Ուսումնարանի որակի քաղաքականությունը վերաբերում է Ուսումնարանի որակի ապահովման սահմանված ոլորտներին և ընկած է յուրաքանչյուր ոլորտի քաղաքականության հիմքում: Որակի ապահովման հիմնական ոլորտներն են. • կառավարում և վարչարարություն, • մասնագիտության կրթական ծրագրի (ՄԿԾ) զարգացում և իրականացում, • ուսումնառության և ուսանողական կյանքի կազմակերպում, • պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորում և կատարելագործում, • հետազոտություն և զարգացում, • ենթակառուցվածքների և ռեսուրսների ձևավորում և բարելավում, • հասարակական պատասխանատվություն, • արտաքին կապեր և միջազգայնացում:
Որակի նպատակներ	• Ներդնել և կատարելագործել որակի կառավարման համակարգը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան: • Ապահովել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահառուների առավելագույն մասնակցության և որակին միտված թափանցիկ և հաշվետվողական մշակույթի տարածման նպատակով: • Մշտադիտարկել Ուսումնարանի գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը:
Քաղաքականության դրույթները	Ուսումնարանի ղեկավարությունը, դասախոսական և վարչական կազմը պարտավորվում են իրականացնել բարձրորակ կրթական ծրագրեր՝ ուղղված

	շահառուների կարիքների և պահանջների բավարարմանը: Այս նպատակով Ուսումնարանը ապահովում է որոշումների կայացման ընթացքում ներքին և արտաքին շահառուների առավելագույն ներգրավվածություն, ինչպես նաև ստեղծում կարիք-ների և պահանջների բացահայտման արդյունավետ մեխանիզմներ: Ուսումնարանի ղեկավարությունը տարածում է ակադեմիական ազատության, թիմային աշխատանքի, լավագույն արդյունքի ձգտման, նորարարության, կարգապահության և ծառայությունների շարունակա-կան բարելավմանը միտված մշակույթ՝ հաշ-վետվողական, թափանցիկ, մասնակցողական կառավարման միջոցով: Այս քաղաքականության իրականացման համար Ուսումնարանը պարտավորվում է մշտադիտարկել կրթական ծրագրերի և ծառայությունների արդյունա-վետությունը և անընդհատ կատարելագործել որակի կառավարման ներդրված համակարգը՝ Մասնա-գիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին և ուղենիշներին համապատասխան:
Հիմնական սկզբունքները	**1. Որակը որպես պարտավորություն** Ուսումնարանի գործունեության հիմքում ընկած են որակի քաղաքականության դրույթները: Ուսումնարանի ղեկավարությունը որակի կատարելագործման գաղափարի կրողն է և ակտիվ մասնակցում է բոլոր գործընթացներին՝ օրինակ ծառայելով շահառուների համար: ՈԱը Ուսումնարանի ողջ աշխատակազմի պարտականությունն է: **2. Որակյալ աշխատակազմ և ռեսուրսներ** Աշխատակազմը վերապատրաստվում և ապահովվում է որակի նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների: **3. Որակյալ տեղեկատվություն** Առկա են տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության համար կայուն և արդյունավետ

	մեխանիզմներ: **4. Մասնակցություն** Ուսումնառողների և այլ շահառուների բավարարվածությունը տրամադրվող ծառայություններից առաջնային է, առկա են վերջիններիս մասնակցության և հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ: **5.Թափանցիկություն** Բոլոր քաղաքականությունները, ընթացակարգերը, հաշվետվությունները և այլ Փաստաթղթերը տարածվում են շահառուների շրջանակներում և հասանելի են:
Ում է վերաբերվում քաղաքականությ ունը	Որակի քաղաքականությունն ուղղված է Ուսումնարանի շահառուներին (ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակազմ, շրջանավարտներ, գործատուներ, կազմակերպություններ և այլն), հիմք է հանդիսանում աշխատակիցների աշխատանքային գործունեության և ղեկավարների որոշումների կայացման համար:
Քաղաքականության իրականացման պատասխանատու մարմինը	Որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու է Ուսումնարանի ողջ աշխատակազմը և համապատասխան պարտականությունն առկա է բոլորի աշխատանքի նկարագրերում: Ուսանողների և այլ շահառուների պատասխանատվությունն է ժամանակին ապահովել հետադարձ կապ Ուսումնարանի գործընթացների և գործողությունների վերաբերյալ: Ուսումնարանի ղեկավարության պարտականությունն է ապահովել պայմաններ որակի նպատակների անխախտ իրականացման համար:
Հասկացությունների սահմանում	**Որակ.** որակը սահմանվում է որպես գործունեության համապատասխանությունը առաքելությանը և տեսլականին, ծառայությունների համապատասխանությունը սահմանված ներքին և արտաքին չափորոշիչներին: ՈԱ-ն Ուսումնարանի որակի ապահովման հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման և շահառուներից ստացված կարծիքների հիման վրա առկա մեխանիզմների

	անընդհատ կատարելագործումն ու արդյունավետության բարձրացումն է: **Որակի կառավարման համակարգը** կարգերի, ընթացակարգերի և ողջ գործիքակազմի ամբողջությունն է՝ ուղղված որակի նպատակների սահմանմանը, իրականացմանը, արդյունավետության գնահատմանը և վերանայմանը:
Քաղաքականության կիրառման շրջանակ	Ուսումնարանի որակի քաղաքականությունը տարածվում է հաստատության իրականացրած բոլոր գործառույթների վրա:
Քաղաքականության վերանայման պարբերականությունը	Որակի քաղաքականության իրականացման արդյունավետությունը գնահատվում է յուրաքանչյուր տարի Ուսումնարանի կառավարման խորհրդի ամփոփիչ նիստում, ներկայացվում է քաղաքականության իրականացման վերաբերյալ նկատառումներ և վերանայման համար առաջարկություններ (իրականացված ներքին և/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա):
Տարածում	Որակի ապահովման քաղաքականությունը տեղադրվում է պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ներկայացվում է նիստերի, ուսանողների և աշխատակազմի հետ հանդիպումների ժամանակ: Որակի քաղաքականության դրույթներն արտահայտող հաստատված փաստաթուղթը տարածվում է Ուսումնարանի կայքի, ներքին և արտաքին ցանցերի միջոցով, ինչպես նաև փակցվում է Ուսումնարանի ուսանողների, աշխատակիցների և արտաքին շահառուների համար տեսանելի վայրերում:

6. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՈՒսումնարանի ՈԱ համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմները, չափորոշիչներն ու ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն գնահատելու հետևյալ ոլորտների որակը:

Ոլորտ 1.

Կրթական ծրագրեր և դասընթացներ. Կրթական ծրագրերի և դասընթացների մշակման և իրականացման որակը գնահատվում է համապատասխան ուղեցույցների և ընթացակարգերի միջոցով: Ուսումնարանի կրթական ծրագրերի իրականացման որակն ու սահմանված նպատակներին համապատասխանությունը իրականացվում են Ուսումնարանի կողմից հաստատված «Ուսումնարան Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման» կարգերով: Կրթական ծրագրի մշտադիտարկման առաջնային նպատակը ծրագրի իրականացման որակի և ռեսուրսների օգտագործման գնահատումն է, իսկ պարբերական վերանայման նպատակը՝ Ուսումնարանի առաքելության ու ռազմավարական նպատակների իրագործմանը նպաստելը և որակավորումների ճանաչումը:

Ծրագրի վերանայումը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություն: Քանակական վերլուծությունը ենթադրում է ծրագրի հետ կապված թվային տվյալների հավաքում և վերլուծում: Այդ տվյալները ներկայացվում են ինքնագնահատման զեկույցում: Որակական վերլուծությունը ներառում է երկու մաս՝ ինքնավերլուծություն, որը կատարվում է ծրագիրն իրականացնող կառույցի կողմից և գնահատում՝ արտաքին փորձագիտական խմբի կողմից:

Ոլորտ 2.

Դասախոսական կազմ. Դասախոսական կազմի որակի գնահատումը ներառում է որակավորումների, պրակտիկայի և շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ չափանիշները: Ուսումնական գործընթացի վերջնարդյունքի նվազագույն չափանիշները սահմանվում են պետական կրթական չափորոշիչներով: Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները/չափանիշները մշակելիս հաշվի են առնվում ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման ու առաջքաշման կարգերը և ընթացակարգերդ

Ոլորտ 3.

Դասավանդում և ուսումնառություն. Դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը ներառում է հետևյալը.

- արդյունավետ գործիքների կիրառում, ինչպես դասալսումներ, հարցումների անցկացում

- ուսանողների կողմից դասընթացների և դասավանդման գնահատումը,

- դասավանդման որակը գնահատելիս հաշվի են առնվում դասախոսների դասավանդման հետ կապված անհատական հանձնարարականների կատարողականը, նշանակումների և առաջքաշումների ընթացակարգերը և այլն,

- դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման բաժինները և ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ կենտրոնը դասավանդման բարելավման գործընթացում ունեն խորհրդատվական և աջակցող դերակատարություն՝դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման և դասավանդման կատարելագործման ծրագրերի իրականացման, դասավանդման ոլորտում գերազանցության մրցանակների տրամա- դրման միջոցով:

Ոլորտ 4.

Ուսանողների գնահատումը. Ուսանողների ինչպես ընթացիկ (միջանկյալ), այնպես էլ եզրափակիչ գնահատման ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ մեխանիզմների առկայություն: Արտաքին գնահատողների բացակայության պայմաններում, ամբիոնները պետք է մշակեն ուսանողների թափանցիկ գնահատման մեխանիզմներ, որոնք համահունչ են ուսանողների գնահատման ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ուղենիշներին: Դրանք առնվազն պետք է պարունակեն գնահատման հստակ չափանիշներ ու չափորոշիչներ և աջակցող ընթացակարգեր, որոնք ապահովում են ուսանողների գնահատման արժանահավատությունը և գնահատականների նշանակման հուսալիությունը:

Ոլորտ 6.

Ռեսուրսներ. Ռեսուրսների որակի գնահատումը ներառում է դասասենյակների, գրադարանի, ընթերցասրահների, տեղեկատվական հաղորդակցման միջոցների, ուսումնական լաբորատորիաների ու համապատասխան սարքավորումների առկայության ու համարժեքության չափումները

Ոլորտ 7.

Հանրային ներգրավում. Ուսումնարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը նպաստելու համար Ուսումնարանը պետք է հնարավորինս աջակցի հասարակության կրթական, տնտեսական. մշակութային առրակի ապահովմանջընթացին: Հանրային ծառրակի ապահովմանյությունների որակի գնահատումը ներառում է.

- հասարակության հետ կապերի գնահատումը՝ օպերատիվ լրատվությունը, հրատարակվող նյութերը, տեղեկատվության տարածման ձևերը և միջոցները, գործունեության նպատակայնությունը, Ուսումնարանի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունները, Ուսումնարանի ներգրավումը հանրային կարիքներին ուղղված ծրագրերում և այլն,
- հարատև ուսումնառության համակարգը՝ շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացները, Ուսումնարանի ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, հանրային ծառրակի ապահովմանյողների և լայն հանրության կրթությունը Ուսումնարանում շարունակելու հնարավորությունները և այլն:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Որակի ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և պատասխանատվությունների բաշխումը նրանց միջև հետևյալն է:

Ուսումնարանի տնօրեն

- ղեկավարում է Ուսումնարան որակի ապահովման քաղաքականության և որակի ապահովման ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործառությունը, ինտեգրումը և փոխգործակցությունը Ուսումնարանի կառավարման այլ մարմինների հետ,
- կառավարում է Ուսումնարանի ինքնագնահատման գործընթացը:

Տնօրենի տեղակալները

- իրականացնում են որակի ապահովման համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում են ներգրավված հիմնական կառույցների միջև գործառական կապերն ու փոխգործակցությունը, մասնավորա– պես՝ ֆակուլտետների, որակի ապահովման կենտրոնի, ուսումնամեթոդական վարչության և առնչվող այլ ստորաբաժանումների միջև,
- կազմակերպում են Ուսումնարանի ինքնագնահատման գործընթացը, ինքնագնահատման զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:

Որակի ապահովման մշտական հանձնաժողովը.

- հանդես է գալիս որպես փորձագիտական և վերահսկողական մարմին՝ գնահատելու համար որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,
- նախապատրաստում և Կառավարման խորհրդին հաստատման է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը, նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,

Ուսումնարանի մասնագիտական և հանրակրթական մեթոդական միավորումները

- պատասխանատու են որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում են կրթական ծրագրերի մշակման, իրականացման ընթացիկ

մշտադիտարկման (մոնիթորինգի) ու պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,

- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, ուսումնական գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակության այլ միջոցներ կրթական ծրագրերի հաջող իրականացման համար՝ ծրագրերի պահանջներին համապատասխան,
- կազմակերպում են կրթական ծրագրերի ինքնագնահատումը և համապատասխան զեկույցի կազմումը՝ ծրագրերի տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի), պարբերական վերանայման և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,
- վերահսկում են կրթական ծրագրերի մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
- վերահսկում են կրթական ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու են ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև Ուսումնարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:

Ուսանողները.

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ընդգրկված են Ուսումնարանի կառավարման մարմնում, որակի ապահովման հանձնաժողովներում,
- մասնակցում են Ուսումնարանի որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, և այլն) ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի մասնակցում են Ուսումնարանի ինքնագնահատման գործընթացներին և համապատասխան զեկույցի պատրաստմանը՝ որպես ինքնագնահատման աշխատանքային խմբի անդամներ:

Արտաքին փորձագետները, շրջանավարտները և գործատուները.

- կատարում են Ուսումնարանի գործունեության, ՈԱ համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,

- հնարավորություն ունեն մասնակցելու շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում,
- Ուսումնարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են Ուսումնարանի շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին:

8. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ուսումնարանի որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և կոնկրետ գործողությունների վերածելու որակի ապահովման քաղաքականությունից բխող գործընթացները և ուղղորդելու դրանց իրականացման ընթացքը:

Ստորև ներկայացված են Ուսումնարան ՈԱ հիմնական գործընթացներն ու ընթացակարգերն ըստ առանձին ոլորտների

- կրթական ծրագրերն ունեն հստակ սահմանված և հրապարակված նպատակ, ակնկալվող կրթական վերջնարդյունքներ և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը,
- ծրագրերի ՈԱ-ն հիմնվում է ծրագրերի պլանավորման, մշակման արտոնման (նախնական հաստատման), անհրաժեշտ փաստաթղթավորման, ծրագրի առաջարկի փորձաքննության, պաշտոնական հաստատման, տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի), պարբերական գնահատման և վերանայման ընթացակարգերի և ուսանողների ու շրջանավարտների հետադարձ կապի մեխանիզմ ների վրա,
- ուսանողները ներգրավված են ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման գործընթացներում (ուսանողների կիսամյակային հարցումներ և բավարարվածության ամենամյա հարցումներ, որոնք գնահատում են ծրագրերի և դասընթացների բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և ծրագրերի իրականացման որակը)
- ծրագրերի որակի գնահատման ժամանակ հաշվի են առնվում արտաքին գնահատողների կարծիքները,
- Որակի ապահովման գործընթացներն առավել կենտրոնանում են այն

ծրագրերի վրա, որտեղ հնարավոր է որակի անկման վտանգ (նոր բացված կամ շարունակաբար ցածր ցուցանիշներ ունեցող ծրագրերի

Ուսանողների գնահատում.

- դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ),
- ծրագրի կրթական վերջնարդյունքների գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում, որը ներառում է ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքի պաշտպանությունը),
- ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ ամենամյա ուսանողական հարցումներ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով,
- ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ դասախոսական կազմի պարբերական հարցումներ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով:

9. ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Որակի շարունակական բարելավման ռազմավարությունը Ուսումնարանի որակի ապահովման քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու կրթական գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ: Դրա հիմնական նպատակն է ստեղծել և գործադրել աջակցող մեխանիզմներ՝ Ուսումնարանի բոլոր մակարդակներում կրթության որակի կայուն և շարունակական բարձրացման համար, ինչպես նաև նախադրյալներ որակի մշակույթի անշեղ զարգացման նպատակով:

Ուսումնարանը որակի շարունակական բարձրացման իր ռազմավարությունն իրականացնելիս ելնում է հետևյալ սկզբունքներից.

- ՈԱ գործընթացները կանոնակարգված են, մշտադիտարկվում և պարբերաբար վերանայվում են,
- ՈԱ գործընթացները հիմնվում են որակի մշտադիտարկման (մոնիթորինգի) զեկույցների, ուսանողների, շրջանավարտների և գործատուների հետադարձ կապի և շրջանավարտների զբաղվածության վիճակագրական տվյալների վրա:

Ուսումնարանի որակի շարունակական բարձրացման մեխանիզմը հիմնված է շրջափուլային մի գործընթացի վրա, որը բաղկացած է հետևյալ չորս հիմնական փուլերից՝

1. **Պլանավորում.** սահմանվում են հիմնական խնդիրները և չափե- լի ակնկալվող վերջնարդյունքները

2. **Իրականացում.** կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները

3. **Գնահատում.** ստուգվում և չափվում են փաստացի ստացված արդյունքները սպասվածի համեմատությամբ, գնահատվում է այդ տարբերությունը

4. **Բարելավում.** մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջո ցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և նախանշված վերջնարդյունքներն իրականացման հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

Այս սկզբունքի կիրառման միջոցով ՄՈՒՀ-ն իր շահակիցներին հավաստում է, որ հնարավորինս բարձր արդյունքների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

Հաշվետվողականության համատեքստում որակի ներքին ապահովումը կիրառվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունն ուսումնական հաստատություններից ակնկալում են կրթական ծառայությունների նպատակների իրականացում: ՈԱԸ կարևորագույն գործիք է ՄՈՒՀ-ի գործունեության համար, որը երաշխավորում է հասարակության պահանջների և կարիքների բավարարումը: ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և գործընթացների արտաքին գնահատում: Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի հստակեցում և ընթացակարգերի թափանցիկություն: ՄՈՒՀ-ի առաքելությունը և գործունեությունը կանոնակարգող բոլոր համապատասխան փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

Ուսումնական հաստատության համար կարևոր խնդիր է նաև ապահովել մասնագիտության կրթական ծրագրերի որակը: ՄՈՒՀ-երը պետք է ունենան կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մշտադիտարկման գործընթացներ: Կրթական ծրագրերը պետք է համահունչ լինեն ամբողջ հաստատության առաքելությանը և ունենան ուսումնառության սահմանված վերջնարդյունքներ: Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում կարևոր է բոլոր շահակիցների ներգրավվածությունը: Կրթական ծրագրի իրականացման կիզակետում ՄՈՒՀ-երը պետք է դիտարկեն ուսանողի ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ուսանողակենտրոն մոտեցումը հատկապես կարևոր է ուսանողների մոտիվացիայի բարձրացման, ինչպես նաև ուսումնական գործընթացում նրանց ակտիվ ներգրավման տեսանկյունից: Բարձրորակ կրթություն ապահովելու գործում հատկապես կարևոր է դասախոսի դերը: Հետևապես ուսումնական

հաստատությունները պետք է ունենան դասախոսական կազմի համալրման և մասնագիտական զարգացման թափանցիկ մեխանիզմներ: Մեծ կարևորություն է տրվում նաև ուսանողների ընդունելության, առաջընթացի, որակավորման շնորհման և ճանաչման գործընթացներին և դրանք կանոնակարգող փաստաթղթերին: Կարևոր է, որ գործող կանոնակարգերը համապատասխանեն հաստատության առաքելությանը և նպատակներին:

Որակի մշակույթ

Որակի ներքին ապահովման գործընթացները պետք է ուղղված լինեն և աջակցեն ուսումնական հաստատությունում որակի մշակույթի ձևավորմանը, զարգացմանը և տարածմանը: Որակի մշակույթ ունեցող կազմակերպություններում ծառայություն մատուցող և ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձ պատասխանատու է մյուսների համար՝ փոխհամագործակցելով նրանց հետ: Որակի մշակույթը ոչ միայն որակի ապահովման համար պատասխանատուների, այլև կազմակերպության բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ստորաբաժանում անմիջական պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի որակի համար: Կարևորվում է, որ ցանկացած գործ առաջին իսկ անգամից կատարվի պատշաճ կերպով: Եթե դա չի հաջողվում, ապա վերլուծվում է այն գործընթացը, որի արդյունքը գոհացնող չէ, որպեսզի արվեն շտկումներ՝ խնդրի կրկնություն թույլ չտալու համար: Որակի մշակույթի առկայության դեպքում գործընթացի յուրաքանչյուր փուլում գնահատվում է արդյունավետությունը և հետադարձ կապ է ապահովվում, ինչի շնորհիվ վերջնարդյունքի ստուգման հատուկ անհրաժեշտություն չի առաջանում: Միայն վերջնարդյունքն ստուգելով՝ դժվար է բացահայտել, թե որ օղակում է տեղի ունեցել խնդիրը, հետևաբար դժվար է մշակել բարելավման քայլերը: Ուսումնական հաստատությունը, որտեղ որակի ապահովման գործընթացները միտված են որակի մշակույթի ձևավորմանը, կարող է բոլոր մակարդակներում ցուցադրել.

- թափանցիկ և ակտիվ գործունեություն, սրտացավ վերաբերմունք որակի նկատմամբ,
- քննադատական ինքնավերլուծություն իրականացնելու պատրաստակամություն,
- ներքին կանոնակարգեր՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական իրականացմամբ,
- հանրամատչելի և հստակ սահմանված պատասխանատվություն որակի վերահսկման և գնահատման համար,
- արտաքին և ներքին շահակիցներից կարծիք ստանալու ձգտում,
- լավագույն փորձի բացահայտման և տարածման ձգտում,
- խնդիրների լուծման համար տեղեկատվության վրա հիմնված տեղին և

համապատասխան գործողությունների ձեռնարկում:

Որակի արտաքին ապահովում

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված են, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- **Վերահսկում.** հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, թե ինչպես է հասնում հնարավորինս բարձր որակի՝ առկա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով:
- **Որակի բարելավում.** հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացների արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով: Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին.

✓ արդյո՞ք ՄՈՒՀ-ն ունի որակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք կիրառվում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,

✓ արդյո՞ք ՄՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների ՈԱՆ ու հետագա բարելավումը,

✓ արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և ուսանողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,

✓ արդյո՞ք ՄՈՒՀ-ը մշտադիտարկում է ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,

✓ արդյո՞ք ձեռնարկվում են որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումների վերացման համապատասխան գործողություններ,

✓ արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն:

Որակի ապահովման ընթացակարգերի մշակման, իրագործման և վերանայման ընթացքում կարևոր է չսահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի

ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական գնահատման մոտեցումների միջոցով:

Որակի արտաքին ապահովման մեխանիզմներ

Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածքում կիրառվում են որակի արտաքին գնահատման և ապահովման տարբեր մեխանիզմներ՝ արտաքին աուդիտ, սերտիֆիկացում, գնահատում, հավատարմագրում և այլն:

Աուդիտ. իրականացվում է հաստատության նախաձեռնությամբ՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ: Աուդիտը մասնագիտական ուսումնական հաստատությունում ընթացակարգերի, գործընթացների և մեխանիզմների գնահատումն է: Աուդիտի դեպքում գնահատվում է ոչ թե բուն համապատասխանությունը նպատակներին, այլ որակի ապահովման ընթացակարգերն ու մեխանիզմները, առաքելության ու նպատակների իրականացման գործընթացները:

Գնահատում. առհասարակ կիրառվում է ծրագրային մակարդակում: Այն գործընթաց է, որով հաստատվում է, որ մասնագիտական ուսումնական հաստատությունում գործող կամ նոր մշակված կրթական ծրագիրը համապատասխան որակի է, բավարարում է ներկայացվող պահանջները, և դրա իրականացումը կարող է շարունակվել կամ սկսվել:

Հավատարմագրում. իրականացվում է պետության կողմից լիազորված կառույցի կողմից: Հավատարմագրումը գործընթաց է, որով արտաքին կառույցը գնահատում է մասնագիտական ուսումնական հաստատության կամ կոնկրետ մասնագիտության կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով: